

Տեսակավորման ալգորիթմ

Դավիթն ուսումնասիրում է տեսակավորման ալգորիթմները: Նա արդեն յուրացրել է մի քանի ալգորիթմ, այդ թվում պղպաղակի ալգորիթմը: Այժմ նա հետազոտում է մի ալգորիթմ, որտեղ թույլատրվում է հաջորդականության ցանկացած տարր հանել իր տեղից և տեղափոխել վերջը:

Օգնեք Դավիթին պարզելու տրված հաջորդականությունը նշված գործողությունով տեսակավորելու համար մինիմալ քայլերի քանակը:

Մուտքային տվյալներ

Առաջին տողում տրված է տարրերի N ($1 < N \leq 500\,000$) քանակը: Երկրորդ տողում տրված է N երկարության ամբողջ թվերի հաջորդականությունը: Հաջորդականության տարրերն իրարից անջատված են մեկական բացատով:

Ելքային տվյալներ

Պետք է արտածել մեկ թիվ՝ նշված եղանակով տեսակավորումն անելու համար մինիմալ քայլերի քանակը:

Օրինակ

Մուտք.

6

11 13 15 12 14 16

Ելք.

4